

# ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ

Սովիեթական Հայաստանի անուանի գրագէտ Ստեփան Զօրեան, Երեւանի ձայնասփիւռի կայանէն խօսեցաւ 1945 թուականի ընթացքին Սովիեթ Միութեան տարած յաղթանակներուն և շինարարական ու գիտական մարզերուն մէջ անոր ձեռք բերած յաջողութիւններուն շուրջ:

Անիկա, անգլխադառնալով արտասահմանի հայութեան և ամբողջ հայ ժողովուրդի ցանկութիւններու իրականացման հարցին, յայտարարեց թէ խոր հաւատք ունի որ Սփիւռքի անտէր և անպաշտպան հարիւր հազարներով մեր հայրենակիցներու հայրենիք վերադարձը, ու հայ ժողովուրդի պահանջներուն իրականացումը և հայրենիքի ընդաւճակումը՝ 1946ին պիտի իրականացուին: